«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ուսուցման փոխներգործուն մեթոդները որպես համագործակցային ուսուցման արդյունավետ մեթոդ

Առարկա ՝ *Հայոց պատմություն*

Ուսուցիչ՝ Գեղամ Հարությունյան

Դպրոց՝ Որևան հ. 135 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի բնութագիրը……6

2. Փոխներգործուն մեթոդների ընդհանուր բնութագիրը.....9

3. Փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակակից հարափոփոխ աշխարհը, հասարակությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման տեմպը ենթադրում են տնտեսության բոլոր ոլորտների, նաև կրթության համակարգի բովանդակության, մեթոդաբանության փոփոխություն: Կրթության որակի ապահովման, կրթության գրավչության բարձրացման, ուսումնական մոտիվացիաայի զարգացման գործընթացներում կարևորվում է մանկավարժական գիտության կողմից ուսուցման նոր, ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների, մանկավարժական պայմանների մշակումը, մասնավոր կամ առարկայական մեթոդիկաների զարգացումը: Վերջին տարիներին շատ է խոսվում ուսուցման գործընթացում փոխներգործուն մեթոդների կիրառման, համապատասխան դասերի կազմակերպման, միջառարկայական կապերի ամրապնդման, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման, ուսուցիչների մեթոդական պատրաստության որակի բարձրացման հիմնահարցերի մասին: Համաշխարհային մանկավարժական պրակտիկան հարուստ փորձ է կուտակել փոխներգործուն մեթոդների տեսական մշակումների և գործնական կիրառությունների վերաբերյալ:

Այսօր ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ: 2021 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատվեց հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որտեղ որպես հանրակրթության վերջնարդյունքներ կամ շրջանավարտների կոմպետենցիաներ կարևորվում են հետազոտական հարցադրումներ և վարկածներ առաջադրելու, հետազոտություններ պլանավորելու և իրականացնելու, ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում վերլուծելու, համադրելու, վերացարկումներ և ընդհանրացումներ կատարելու, համագործակցելու, նախագծեր կառուցելու և մի շարք այլ կարողունակություններ:[1] Կարևոր տեղ է հատկացվում ուսուցման փոխներգործուն մեթոդներին:

Ուսուցման մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են, ավելի կիրառելի: Իսկ այս խնդիրը ավելի շատ լուծվում է փոխներգործուն մեթոդների միջոցով, որոնք հիմնականում ենթադրում են սովորողների և սովորեցնողների ակտիվ համագործակցություն:

Ժամանակակից ուսուցման մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Փոխներգործուն մեթոդների միջոցով ապահովվում են ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ յուրաքանչյուր սովորող յուրացնում է ոչ միայն ուսումնական նյութը, այլ ակտիվորեն փոխգործակցում է իր համադասարանցիների, ուսուցիչների հետ:

Ժամանակակից պահանջներից է նաև ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը: Այլևս բավարար չէ ուսուցումը որպես կյանքի նախապատրաստություն դիտարկելը: Ուսուցումը ինքը պիտի հիմնված լինի կյանքի իրավիճակների վրա: Հենց այդպիսին են ուսուցման փոխներգործուն մեթոդները: Սրանով այդ մեթոդները օգնում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների զարգացմանը: Շատ կարևոր է փոխներգործուն մեթոդների կիրառման ընթացքում հաշվի առնել յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները, բովանդակությունը, նպատակը, ակնկալվող կրթական արդյունքները, սովորողների վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը տվյալ առարկայով:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման հրատապությամբ է պայմանավորված հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը ուսուցման փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունների ուսումնասիրումն է համագործակցային ուսուցման արդյունավետության համատեքստում:

Հետազոտության խնդիրներն են.

1. բացահայտել փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները ուսուցման գործընթացում,
2. ուսումնասիրել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի բովանդակությանը, կիրառման մեթոդաբանությանը,
3. մշակել փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը կազմված է տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, երեք պարագրաֆներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային 20 էջ է:

1. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի բնութագիրը

Այսօր մանկավարժության մեջ արդեն իսկ ձևավորվել ու լայն կիրառություն են գտել մի շարք տեխնոլոգիաներ, որոնց գերնպատակը ուսուցման արդյունավետության բարձրացումն է: Աշխատանքի շրջանակներում կխոսենք համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի մասին:

Համագործակցային տեխնոլոգիան 20-րդ դարի երկրորդ կեսին ամենածավալուն մանկավարժական ընդհանրացումներից մեկն է, որը կրթական համակարգում առաջ բերեց բազմաթիվ նորարարություններ: Համագործակցային մանկավարժության գաղափարները ընդհանրացվել և արտահայտվել են նորարար-մանկավարժների կողմից /Ս.Լ.Սոլովեյչիկ, Վ.Մ.Մատնեվ, Ի.Պ.Պավլով, Բ.Ֆ.Շատալով, Շ.Ա.Ամոնաշվիլի, և այլոք/, որոնք էլ այդ տեխնոլոգան անվանել են համագործացության մանկավարժություն:

Համագործակցային մանկավարժության հիմքում ընկած են երեխայի նկատմամբ հումանիստական մոտեցումը, խմբում ակտիվ փոխներգործումը, ուսուցչի բարձր պրոֆեսիոնալիզմը և դպրոցի նկատմամբ հասարակական ուշադրությունը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան նպաստեց ուսուցիչների ստեղծագործական համագործակցությանը գործընկերների, աշակերտների և ծնողների հետ, խթան հանդիսացավ մի շարք հեղինակային դպրոցների ստեղծմանն ու արդյունավետ գործունեությանը:

Ուսումնական համագործակցությունը մանկավարժական համագործակցության ձև է: Ի.Ա.Զիմնյայան մանկավարժական համագործակցության մեջ առանձնացրել է որպես բնութագրիչներ ակտիվությունն ու համակարգվածությունը[2]: Ընդ որում, նրա կարծիքով, մարդկանց համագործակցության մեջ բացահայտվում են նաև հետևյալ կարևոր բնութագրիչները՝ գիտակցվածությունն ու նպատակադրումը:[3]

Համագործակցային ուսուցման պայմաններում երեխան ներգրավված է ուսումնական խնդիրների լուծման մեջ դասի հենց սկզբից: Առանձնահատկություններից մեկն այն է, որ երեխան ուսումնական խնդիրները լուծում է ընկերների հետ, ուսուցչի ոչ

---

[2] Зимняя И.А. Педагогическая психология. - М.: Просвещение, 1998. с 102.
[3] Նույն տեղում՝ էջ 105:

անմիջական միջամտությամբ: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ դպրոցականը շփման մեծ կարիք ունի, ապա համագործակցային ուսուցումը ուղղակի կատարյալ է այս տարիքի երեխաների համար, քանի որ ստեղծում է անձի զարգացման և ուսման համար լիարժեք պայմաններ, որի շնորհիվ աշակերտը ձեռք է բերում գիտելիքներ, կարգավորում է իր վարքը ոչ թե մեծերի միջամտությամբ, այլ ընկերների պահանջով և ուղղորդմամբ:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կազմակերպումը սկզբնական շրջանում, և այսօր էլ, բարդությունների հետ է կապված, քանի որ երեխան համագործակցում է դասարանում, հատուկ սեղանների շուրջ, ոչ թե նայելով իր դասընկերոջ թիկունքին, այլ դեմ առ դեմ նստած: 21-րդ դարի սկզբին, երբ ՀՀ-ի որոշ դպրոցներ սկսեցին աշխատել այդ տեխնոլոգիայով, տարբեր դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ հաջողվեց ձեռք բերել համապատասխան գույք, որը հնարավորություն էր տալիս ձևավորել համագործակցային դասարաններ: Սակայն, քիչ չէին դեպքերը, երբ երեխաները աշխատում էին համագործակցային խմբերով՝ իրենց ավանդական նստարանների շուրջ, ինչը, պետք է նշենք, բացասաբար էր անդրադառնում ոչ միայն նրանց աշխատանքի արդյունքների վրա, քանի որ նրանք շուտ էին հոգնում, այլ նաև առողջության վրա /ողնաշարի ծռումներ, տեսողության հետ խնդիրներ և այլն/:

Ուսուցիչները դպրոցում ուշադրություն պետք է դարձնեն յուրաքանչյուր երևույթի վրա՝ ինչպես է նստած աշակերտը, որտեղ են դրված նրա ուսումնական պարագաները, ինչպես են աշակերտները բանավիճում, աշխատում նյութի հետ և այլն:

Ընդհանրանապես, խմբային ցանկացած աշխատանքի կազմակերպումը պետք է բծախնդրորեն նախապատրաստվի: Դպրոցականը պետք է գիտակցի, որ խմբում աշխատելու արդյունքում ինքնուրույն ձեռք է բերելու գիտելիքներ, քննարկելու է դրանց ճշմարտացիությունը, ներկայացնելու է ոչ թե իր անհատական աշխատանքի արդյունքը, այլ խմբի նվաճումը:

Ամենաբարդ խնդիրը՝ խմբերի ստեղծումն է: Համագործակցային ուսուցման տարածման սկզբնական փուլում ուսուցիչներից շատերը այս տեխնոլոգիայի «անհարմարության» հիմնական պատճառը համարում էին հենց այդ հանգամանքը: Խմբերի բաժանելու գործընթացը նրանցից շատ ժամանակ էր խլում, աշխատանքները դադարում էին, արդյունքում՝ դասն ավարտվում էր առանց նպատակներն ու խնդիրները իրականացնելու: Աշակերտներին խմբերի բաժանելու համար անհրաժեշտ է հաշվի

առնել նրանց հակումները, անձնային որակները /կազմակերպվածություն, պատասխանատվություն, թույլ և ուժեղ ունակություններ և այլն/: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան կիրառող ուսուցիչները պնդում են, որ ամենաարդյունավետ ուսումնական խումբը պետք է կազմված լինի 5-6 աշակերտից: Խմբերը արագ բաժանելու համար որպես կանոն անհրաժեշտ է լինում 3-5 դասաժամ, որ երեխաները սովորեն արագ և օպերատիվ, առանց ժամանակ կորցնելու հավաքվել և սկսել աշխատել:

Ամենաբարդ խնդիրը ուսուցչի համար համագործակցային ուսուցման պայմաններում աշակերտների աշխատանքների գնահատումն է: Մասնագետները պնդում են, որ անհրաժեշտ է հաշվի առնել նախ ընթացիկ աշխատանքների ժամանակ աշակերտի ակտիվությունը, նրա աշակերտական, մարդկային և անձնային որակները՝ հանդուրժողականություն, բարյացակամություն, համբերատարություն, համեստություն և այլն:[4] Խմբային աշխատանքի գնահատման հաջորդ կարևոր պահը խմբի աշխատանքը ճիշտ գնահատելն է: Խմբում ներգրավված աշակերտները չպետք է ստանան տարբեր գնահատականներ:

Հիմնական դպրոցում համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ունի որոշակի հակացուցումներ.

1. չի կարելի կազմել խումբ երկու թույլ առաջադիմությամբ աշակերտներից: Նրանք ոչինչ չեն կարող փոխանցել մեկը մյուսին,
2. աշակերտները, որոնք այս կամ այն պատճառով ցանկություն չունեն աշխատել միասին, չի կարելի հարկադրաբար միավորել մեկ խմբում,
3. չի կարելի պահանջել լռություն, միասնական աշխատանքի կատարման ընթացքում «աշխատանքային աղմուկը» անխուսափելի է, քանի որ նրանք կարծիքներ են փոխանակում, քննարկում են և այլն: Պետք է լռեցնել չափազանց բարձր խոսողներին, որոնք իրենց ձայնարկումներով խանգարում են իրենց ընկերներին և մյուսներին:[5]

Այսպիսով, համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կազմակերպման ձևերի իմացությունը և ճիշտ իրականացումը նպաստում են հիմնական դպրոցում մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, աշակերտների

---

[4] Занков Л.В., О начальном обучении. - М.: Изд-во АПН РСФСО, 1963. с .96.

[5] Дьяченко В.К., Сотрудничество в обучении: книга для учителя. М: Просвещение. 1991.- с. 68 / всего 192 с./

ստեղծագործական մտածողության զարգացմանը, գիտելիքների ակտիվ յուրացմանը, հաղորդակցական կարողությունների, արժեքային համակարգի ձևավորմանը և այլն:

Ժամանակակից դպրոցը գտնվում է բարեփոխումների փուլում: Հանրակրթության համակարգում կատարվող բարեփոխումները կապված են դպրոցականի նոր կարգավիճակի՝ մանկավարժական գործընթացի սուբյեկտ դառնալու հետ:

Համագործակցային ուսուցման գործընթացում ակտիվացնելով աշակերտին՝ մենք ոչ թե պասիվացնում ենք ուսուցչին, այլ տեսնում ենք նրան ուղղորդողի, խորհրդատուի դերում: Այսօրվա ակտիվ դիրքորոշում ունեցող աշակերտը վաղվա ակտիվ քաղաքացին է, որը պետք է վերափոխի իրեն շրջապատող աշխարհը՝ ներգրավվելով հասարակության զարգացման գործընթացներին:

2. Փոխներգործուն մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ուսումնական գործընթացում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ: Մենք մասնավորապես անդրադառնալու ենք այն մեթոդներին, որոնցում սովորողներն ունեն ակտիվ դերակատարում, որոնք աշակերտներին դարձնում են գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացի ակտիվ մասնակից, համագործակցության ակտիվ կողմ:

Փոխներգործուն մեթոդներն աշակերտներին տալիս են ոչ միայն ուսուցչի, այլև մեկը մյուսի հետ համագործակցելու հնարավորություն: Փոխներգործուն մեթոդների ուսուցումը հիմնված է ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների համագործակցության վրա: Փոխներգործուն մեթոդներն ունեն անձնակողմնորոշիչ ուղղվածություն, քանի որ այս մեթոդները ենթադրում են կոլեկտիվ, համագործակցային ուսուցում, որի շրջանակներում և՛ ուսուցիչը, և՛ աշակերտները ուսումնական գործընթացի սուբյեկտներ են: Ուսուցիչը հաճախ հանդես է գալիս, որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոխներգործուն մեթոդները հնարավորություն են տալիս կտրուկ բարձրացնել յուրացրած ուսումնական նյութի որակը, հարստացնել ձեռքբերած տեսական գիտելիքները, ձևավորված

կարողությունները և հմտությունները կիրառել ոչ միայն դասի ընթացքում, այլև կյանքում և ազդում են ոչ միայն աշակերտի գիտակցության, այլև զգացմունքների և կամքի վրա:[6]

Ուսուցման փոխներգործուն մեթոդների հիմնական առանձնահատկություններն են.

- սովորողը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
- սովորողն ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույնությանը, ստեղծագործական, քննական մտածողությանը,
- սովորողի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- սովորողը ձեռք է բերում համագործակցային, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ,
- նյութի ուսուցման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության մջավայր:

Ուսուցման գործընթացում մեթոդի ընտրությունը պայմանավորող գործոններն են.

- ուսուցման նպատակ և խնդիրներ,
- թեմա և ուսուցման բովանդակություն,
- ակնկալվող վերջնարդյունքներ,
- ուսումնական նյութի քանակ ու բարդություն,
- սովորողների պատրաստվածության մակարդակ,
- սովորողների շահագրգռվածություն կամ մոտիվացիա,
- սովորողների տարիք ու աշխատունակություն, ուսումնական վարժվածություն ու դիմացկունություն,
- ուսումնական ժամաքանակ,
- ուսուցման գործընթացի նյութատեխնիկական և կազմակերպման պայմաններ,
- մյուս /նախորդ /դասերին կիրառված մեթոդներ,

[6] Черняк Т. А., Интерактивные методы обучения как способ повышения мотивации обучающихся / Т. А. Черняк, Ю. В. Лосич. — Текст: непосредственный // Юный ученый. — 2022. — № 2 (54). — С. 79-82.

- ուսումնական պարապմունքի տիպ և կառուցվածք,
- սովորող և սովորեցնող հարաբերությունների բովանդակություն, ոճ,
- դասարանում սովորողների թվաքանակ,
- սովորեցնողի մասնագիտական որակավորում:

Ուսուցման մեթոդները գրեթե երբեք հանդես չեն գալիս առանձին կամ «մաքուր» ձևով:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խորը և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Բազմաթիվ նոր մեթոդների իմացությունը թեև անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ արդյունավետ դասավանդման համար: Կարևոր է նաև մեթոդները հմտորեն համադրելու և նպատակահարմար կիրառելու մասնագիտական կարողությունը: Ժամանակակից ուսուցչի մասնագիտական հիմնական գործառույթներից առանձնանում են յուրաքանչյուր աշակերտին մանկավարժական աջակցությունը, ուղղորդումն ու համագործակցությունը նրա հետ:

Ուսուցչի աշխատանքում այսօր կարևորվում է տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը: Այսօր տեղեկատվության 50%-ից ավելին երեխային տալիս են ոչ թե ուսուցիչն ու դպրոցը, այլ զանգվածային լրատվական միջոցները, համացանցը, ծնողը, ընկերը, փողոցը, շրջապատող կյանքի սեփական դիտարկումները: Սա մանկավարժական գործընթացի որակական նոր մակարդակ է, նոր մոտեցում, որը հնարավոր է միայն սովորողի ուսուցման փոխներգործուն մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառելու դեպքում:

Ավանդական դպրոցում սովորողը հիմնականում գիտելիքների որոշակի պաշար ընկալող ու մտապահող էր: Մինչդեռ այսօր փոխներգործուն մեթոդները երեխային մղում են նախաձեռնության, ստեղծագործական մոտեցման, ինքնուրույն դատողություններ անելու: Այս պարագայում ցանկացած ուսումնական նյութ երեխան շատ արագ կարող է յուրացնել:

Ժամանակակից դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր պահանջներից է ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը: Այլևս բավարար չէ ուսուցումը որպես կյանքի նախապատրաստություն դիտարկելը: Ուսուցումը ինքը պիտի հիմնված լինի կյանքի իրավիճակների վրա: Հենց այդպիսին են ուսուցման ինտերակտիվ մեթոդները, որոնք օգնում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների զարգացմանը:

Փոխներգործուն մեթոդների կիրառումն ուսուցման գործընթացում ապահովում է նաև երկխոսություն, հաղորդակցման արդյունավետություն:[7] Ժամանակակից հասարակությունը շատ խայտաբղետ է դարձել: Որպեսզի այդ խայտաբղետությունը նպաստի հասարակության զարգացմանը, անհրաժեշտ է երկխոսության մթնոլորտի ստեղծում, հաղորդակցական հմտությունների զարգացում:

Այդուհանդերձ, չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասագործընթաց եզակի է, անկրկնելի:

Փոխներգործուն ուսուցումը ենթադրում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխգործունեություն, որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, ինչը խթանում է անձի լիարժեք ցարգացումը: Սեփական պատկերացումները, մտքերն ու կարծիքներն ուրիշներին հաղորդելը բավական համարձակ քայլ է: Աշակերտը ստիպված է բացեիբաց ցուցադրել ուրիշներին, թե ինքն ինչպիսի մտածողության և ինչ պատկերացումների տեր է: Դասարանում ընկերների հետ մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել, կասեցնել իր դատողությունները կամ խոսակցությունը սեփական ձևով տանելու ներքին պահանջը: Որպես վախհատուցում նրանք ստանում են ուրիշների կարծիքը, ընդլայնված համատեքստը, ուր նրանք կարող են տեղադրել սեփական մտքերը և դրանք հարմարեցնել պատկերացումների այն կտավի մեջ, որը հետագայում ստեղծվում է ուսման և կենսափորձի միջոցով: Մյուս կողմից էլ աշակերտները, սեփական անձի նկատմամբ ցածր ինքնագնահատականունենալու դեպքում չեն համարձակվի իրենց մտքերն ազատորեն արտահայտել: Իսկ եթե նրանք տեսնում են, որ իրենց մտքերը կարևորվում են, ուսուցիչն իսկապես հարգում ու

[7] Карпенко Е.А., Райс О.И., Интерактивные технологии в обучении. Педагогика нового времени. –М., 2022. –80 стр..

գնահատում է դրանք, նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ և զգուշությամբ են մոտենում սեփական մտքերին:

Փոխներգործուն ուսուցման մարդասիրական սկզբունքը պահանջում է վերանայել ուսուցման ողջ բովանդակությունը, այսինքն՝ ճանաչել յուրաքանչյուր երեխայի անձի առանձնահատկությունները, նրա ստեղծագործ բնույթը: Նրա ներքին ակտիվությունը հանգեցնում է նրան, որ երեխան հրաժարվում է որպես կրթական գործընթացի գլխավոր նպատակ դիտարկել համապատասխան գիտելիքների որոշակի ծավալի յուրացումը: Գլխավոր նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է:

Հանրակարթական դպրոցում դասերի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, քանի որ դրանք խթանում են սովորողի ակտիվությունը, մասնակցությունը դասագործընթացին որպես համագործակցող ակտիվ կողմ, թույլ են տալիս նյութը մատուցել մատչելի, հետաքրքիր, վառ և պատկերավոր ձևով, նպաստում են գիտելիքների ավելի խորը յուրացմանը, հետաքրքրություն են առաջացնում դրանց ձեռքբերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական, սոցիալական, ինտելեկտուալ կարողունակություն:

3. Փոխներգործուն մեթոդների տեսակները և դրանց դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը նախատեսում է ուսուցչի կողմից ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցում, իսկ ուսումնառողի կողմից մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը,

հարցադրումը՝ ներառելով գործնական վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ փոխներգործուն մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ուսուցման փոխներգործուն մեթոդներ[8]

- դերային խաղ
- ուսումնական նախագիծ
- բանավեճ
- Վենի դիագրամ
- T-աձև աղյուսակ
- m-աձև աղյուսակ
- մտագրոհ
- խմբավորում
- պրիզմա
- ձնագնդի
- 5 բոպեանոց ազատ շարադրանք
- գաղափարների քարտեզ
- փոխգործուն նշանների համակարգ
- խորանարդում
- խճանկար

[8] Двухличанская Н.Н., Интерактивные методы обучения как средство формирования ключевых компетенций // Наука и образование, 2011. https://cyberleninka.ru/article/n/interaktivnye-metody-obucheniya-kak-sredstvo-formirovaniya-klyuchevyh-kompetentsiy/viewer

- **շրջագայություն պատկերասրահում**
- **քառաբաժան**

Սրանք այնպիսի մեթոդներիեն, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ապահովում է սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերումը՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն):

Փոխներգործուն մեթոդների[9] հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու, բանավիճելու, բանակցելու, սեփական մտքերն ու ցանկությունները հստակորեն դիմացինին փոխանցելու կարողությունները՝ զարգացնելով աշակերտների խոսքը: Այս մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռքբերված գիտելիքները: Սրանք զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սահիկների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ:

Փոխներգործուն մեթոդները նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությանը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Այն բնութագրվում է աշակերտների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական արդյունավետ գործունեության ակտիվացման

[9] Кашлев С.С., Технология интерактивного обучения. –М., 2021. 239 стр.

հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

Դպրոցի կարևոր խնդիրն է երեխաներին հաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: Զույգերով աշխատանքը ուսումնական գործընթացի կազմակերպման առավել հարմարավետ ձևն է, որի նպատակն է գործնականում միջանձնային հարաբերությունների ձևավորումը: Զույգերով աշխատանքը ձևավորում է ընդհանուր նպատակն ընդունելու, պարտականությունները բաժանելու, առաջարկված նպատակին հասնելու եղանակները համաձայնեցնելու, իր գործողությունները համատեղ գործունեության մեջ հարաբերակցելու, աշխատանքի նպատակի և արդյունքի համեմատության մեջ մասնակցություն ունենալու կարողունակություններ:

Փոխներգործուն մեթոդները հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: Այս մեթոդների կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

Փոխներգործուն մեթոդների կիրառումը նաստում է՝

- ուսումնական դրական խթանի ձևավորմանը,
- սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավմանը,
- ինքնագործունեության խթանմանը,
- ճանաչողական գործընթացների զարգացմանը՝ մտածողություն, խոսք, հիշողություն, երևակայություն,
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ստեղծագործական մտածողության զարգացմանը,
- աշակերտի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը:

Դպրոցում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է արհեստական բնույթ:

Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքի ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ-ծնող, աշակերտ-տեղեկատվական նյութ, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը:

Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով: Միջառարկայական կապերի ստեղծումը կարևոր պայման է երեխաների մտավոր կարողությունների զարգացման համար: Գիտակ ուսուցիչը, եթե ուզում է հասնել հաջող արդյունքի, իր գործունեության մեջ միջառարկայական կապեր ստեղծելու համար պետք է ընդգրկի ուսուցման փոխներգործուն մեթոդները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Կարծում ենք, որ ուսուցման տեխնոլոգիաները, փոխներգործուն մեթոդները, մասնավորապես՝ համագործակցային ուսուցումը էականորեն կարող են զարգացնել.

- սովորողի իմացական որակները՝ մտածողության գործառնությունները, ընկալման առանձնահատկությունները,
- ուսումնական մոտիվացիան,
- ինքնուրույնությունը,
- նախաձեռնողականությունը,
- աշխատունակությունը,
- հաղորդակցական կարողությունները,
- խմբային աշխատանքի հմտությունները:

2. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի հիմքում ընկած են սովորողի հաղորդակցական, փոխըմբռնման, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

3. Ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

- ✓ հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, առարկայի իմացության մակարդակը, կարողություններն ու հմտությունները, նախասիրությունները,
- ✓ հաշվառել ուսուցչի մասնագիտական և ընդհանրական կարողունակությունների մակարդակը,
- ✓ ապահովել ուսուցչի մանկավարժական մեթոդական պատրաստվածության բարձր մակարդակը,
- ✓ դասարանում աշակերտների քանակը և դրան համապատասխան ուսուցման ձևը,

- ✓ հաշվի առնել առարկայի, թեմայի առանձնահատկությունները,
- ✓ հաշվի առնել կոնկերտ թեմայով դասի նպատակը, խնդիրները, ակնկալվող կրթական վերջնարդյունքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Зимняя И.А., Педагогическая психология. - М.: Просвещение, 1998. -360 с.
2. Занков Л.В., О начальном обучении. - М.: Изд-во АПН РСФСО, 1963. с .96.
3. Дьяченко В.К., Сотрудничество в обучении: книга для учителя. М: Просвещение. 1991.- с. 68 / всего 192 с./
4. Черняк Т. А., Интерактивные методы обучения как способ повышения мотивации обучающихся / Т. А. Черняк, Ю. В. Лосич. — Текст: непосредственный // Юный ученый. — 2022. — № 2 (54). — С. 79-82.
5. Карпенко Е.А., Райс О.И., Интерактивные технологии в обучении. Педагогика нового времени. –М., 2022. –80 стр..
6. Двухличанская Н.Н., Интерактивные методы обучения как средство формирования ключевых компетенций // Наука и образование, 2011. https://cyberleninka.ru/article/n/interaktivnye-metody-obucheniya-kak-sredstvo-formirovaniya-klyuchevyh-kompetentsiy/viewer
7. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788